


Հայաստանի Անկախության հռչակագրի գաղափարական հիմքերը. ազատական և ազգայնական խոսույթներ

Չաքարյան Լիլիթ Ս.

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0005-4497-5410>

lilitzakaryan@gmail.com

ՀՏԳ՝ 941 (479.25); EDN: HPVUOV

DOI: 10.58587/18292437-2025.3-76

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ Գերագույն խորհուրդ, Անկախության հռչակագիր, Հայաստանի Հանրապետություն, ազատականություն, ազգայնականություն, խորհրդային հանրապետություններ

Идеологические основы Декларации независимости Армении: либеральный и националистический дискурсы

Закарян Лилит С.

кандидат исторических наук, доцент,

старший научный сотрудник Институт истории НАН РА (Ереван, РА)

Аннотация. Статья посвящена анализу идеологических оснований армянского политического дискурса в период разработки Верховным Советом Армянской ССР Декларации о независимости Армении. Либерализация политической жизни в годы Перестройки создала благоприятные условия для развития националистической идеологии. В статье обосновывается, что общий антисоветский настрой – вызванный неспособностью советского руководства урегулировать Карабахский конфликт, сокрытием преступлений, совершённых против армян в соседней советской республике, а также восприятием советской модели как репрессивной и антинациональной – в сочетании со стремлением к независимости и демократическому устройству общества привёл к слиянию либерального и националистического дискурсов в единый освободительный нарратив. Через анализ политической риторики и дискуссий в Верховном Совете Армянской ССР, проходивших в условиях формального существования Советского Союза, демонстрируется механизм формирования идеологической конвергенции, предвосхитившей становление новой армянской государственности. В статье также проводится сравнительный анализ деклараций о независимости, принятых в тот же период другими союзными республиками. Методологической основой исследования послужили архивные документы – стенографические отчёты заседаний парламента, тексты деклараций о независимости и суверенитете, а также научная литература, посвящённая данной проблематике.

Ключевые слова и словосочетания: Декларация о независимости, суверенитет, либерализм, национализм, Верховный Совет, Республика Армения, советские республики

The Ideological Foundations of the Armenian Declaration of Independence: Liberal and Nationalist Discourses

Zakaryan Lilit S.

Candidate of Historical Sciences, Associate Professor,

Senior Researcher at the Institute of History of the NAS RA (Yerevan, RA)

Abstract. This article analyzes the ideological foundations of Armenian political discourse during the drafting of the Declaration of Independence of Armenia by the Supreme Council of the Armenian SSR. The liberalization of political life during the Perestroika period created favorable conditions for the development of nationalist ideology. The article argues that the prevailing anti-Soviet sentiment – driven by the Soviet leadership’s failure to resolve the Nagorno-Karabakh conflict, the concealment of crimes committed against Armenians in a neighboring Soviet republic, and the perception of the Soviet model as repressive and anti-national – combined with aspirations for independence and democratic governance, led to the merging of liberal and nationalist discourses into a unified liberation narrative. Through an analysis of political rhetoric and debates in the Supreme Council of the Armenian SSR, held while the Soviet Union still formally existed, the article demonstrates the mechanism of ideological convergence that anticipated the formation of a new Armenian statehood. The study also offers a comparative analysis of declarations of independence adopted by other Soviet republics during the same period. The methodological basis of the research includes archival documents – verbatim transcripts of parliamentary sessions, texts of declarations of independence and sovereignty, as well as scholarly literature on the subject.

Keywords & phrases: Declaration of Independence, sovereignty, liberalism, nationalism, Supreme Council, Republic of Armenia, Soviet republics

Ներածություն

1980-ականների կեսերից ԽՍՀՄ-ում սկսված վերակառուցման քաղաքականությունը հնարավորություն ընձեռեց մի շարք լիբերալ-դեմոկրատական ուղղվածությամբ քաղաքացիական նախաձեռնությունների ձևավորման՝ իրավապաշտպան, բնապահպանական և մշակութային ոլորտներում: Քաղաքական ազատականացումը սանձագերեց այն քաղաքական ուժերը, որոնք ի վերջո փլուզեցին պետությունը [7, էջ 332]: Նոր քաղաքական միջավայրը բարենպաստ պայմաններ առաջացրեց նաև ազգայնական գաղափարախոսությունների վերածնման համար:

XX դարի վերջերում արևմտյան ակադեմիական շրջանակներում տարածված էր այն տեսակետը, որ ազգայնականությունը՝ որպես ժամանակին օրինաչափ, բայց իր պատմական առաքելությունը կատարած գաղափարախոսություն, դուրս է մղվում արդի աշխարհաքաղաքականությունից: Ազգայնականությունը դատապարտված էր համարվում տնտեսության գլոբալացման, զանգվածային հաղորդակցման և մշակութային հիբրիդացման պայմաններում [15, էջ 388]: Սակայն ԽՍՀՄ փլուզման գործընթացները ցույց տվեցին, որ ազգայնականությունն ունի հարմարվողական և քաղաքականապես բավականին ակտիվ ներուժ: Դրա վառ ապացույցն էր նաև «բովանդակությամբ ազգային, ձևով՝ դեմոկրատական»¹ [19]: Ղարաբաղյան շարժումը ներառեց ինչպես ազատական, այնպես էլ ազգայնական հռետորաբանությունները, համադրեց քաղաքացիական ազատությունների և ազգային ինքնորոշման իրավունքի գաղափարները: Այն ազգային ինքնագիտակցության աճի հարթակ հանդիսացավ՝ պատմական արդարության պահանջը ԽՍՀՄ պայմաններում աստիճանաբար տրասֆորմացնելով անկախ ազգային պետության պահանջի: Պատկերավոր ասած՝ ազգային «ոգին, որը ծարավ էր ֆիզիկական մարմնավորման, երագում էր նոր կյանք սկսել նոր ձեռք բերված մարմնում»² ազգային պետությունում [12, էջ 30]:

Հայաստանում ազգայնականության աճին նպաստեց խորհրդային իշխանությունների ձախողված ազգային քաղաքականությունը: Այդ գործընթացը հատկապես սրվեց 1990 թ. գարնանից՝ Հյուսիսային Արցախում խորհրդային ուժայինների մասնակցությամբ իրականացվող հայաթափման գործողությունների ֆոնին: Դա վերջնականապես խաթարեց վստահությունը Կենտրոնի հանդեպ և, ինչպես մի քանի այլ միութենական հանրապետություններում, նպաստեց անջատողական ձգտումների ուժեղացմանը:

¹ Ծարժումը՝ «Հայք» թերթին տված հարցազրույցում, այդպես էր գնահատել Լևոն Տեր-Պետրոսյանը:

Քաղաքական պայքարը աստիճանաբար տեղափոխվեց Գերագույն խորհրդի նիստերի դահլիճ, որտեղ 1990 թ. հուլիսից սկսած քաղաքական ուժերի գաղափարական հակադրությունը ձեռք բերեց ինստիտուցիոնալ բնույթ: Սկզբնական շրջանում գերակշռող ՀԿԿ-ն և ընդդիմադիր ՀՀԾ-ն շուտով ներքին տրոհումների ենթարկվեցին՝ առաջ բերելով նոր խմբակցությունների ձևավորում:

Ներկայացվող հոդվածը նպատակ ունի վերլուծել գաղափարական այն խոսույթները, որոնց շրջանակում մշակվեց և ընդունվեց «Հայկական ԽՍՀ անկախության հռչակագիրը»: Վերլուծության առարկան հռչակագիրն է, որը դիտարկված է ոչ թե որպես իրավաքաղաքական փաստաթուղթ², այլ որպես ազգայնական և ազատական գաղափարախոսությունների դրսևորման հարթակ: Հետազոտության մեթոդներն են կոնտենտ-վերլուծությունը, պատմահամեմատական մեթոդը, ինչպես նաև որակական վերլուծության տարրերը՝ գաղափարական բաղադրիչների համակարգման և մեկնաբանման նպատակով: Ուսումնասիրվել են ազգայնականությանը վերաբերվող արտասահմանյան հեղինակների գործերը:

1. Գաղափարախոսական մոտեցումները Անկախության հռչակագրի քննարկման ընթացքում

1990 թվականի օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհրդի ընդունած Անկախության հռչակագիրը ոչ միայն իրավաքաղաքական փաստաթուղթ է, այլև գաղափարախոսությունների հասունացման և արտահայտման կարևոր հարթակ: Հռչակագրի տեքստի մշակման և քննարկման փուլում հստակ երևացին երկու առանցքային գաղափարական ուղղություններ, ազատական և ազգայնական, որոնց խոսույթները դեռևս միաձուլված էին: Ազգային անկախության համար պայքարը ներկայացվում էր որպես ժողովրդավարության համար պայքար: Խորհրդային ռեժիմի քննադատությունը զուգորդվում էր ազգի համար սպառնալիքների վերաբերյալ փաստարկներով: Հնչեցվող քաղաքական ծրագրերը ներառում էին ինչպես տնտեսության ազատականացման և շուկայական բարեփոխումների պահանջ, այնպես էլ ազգային ինքնության հաստատող ծրագրեր:

Այդ ժամանակաշրջանի առանձնահատկությունն այն էր, որ չկար որևէ քաղաքական ուժ,

² Անկախության հռչակագրի ընդունման ընթացակարգը հոդվածի հեղինակս մանրամասն նկարագրել եմ «Անկախության օրակարգի ձևաւորումը անկախութեան հրապարակու եւ Գերագոյն խորհրդում» հոդվածում (Հայկագեան հայագիտական հանդես, 2023 թ., 43(2), էջեր 249-252) և «Պետականաշինութեան հիմնախնդիրները ՀՀ Գերագոյն խորհրդում 1990-1995-ին» հոդվածում (Հայկագեան հայագիտական հանդես, 2024 թ., 44(2), էջեր 224-230):

որ ազգայնական գաղափարախոսություն ընդհանրապես չդրսևորեր (նույնիսկ կոմունիստները), տարբերությունը դրա չափաբաժնի մեջ էր: Այսպես, ԳԽ նիստերից մեկում Լևոն Տեր-Պետրոսյանը Հայ դատի նկատմամբ իր վերաբերմունքի վերաբերյալ հարցին պատասխանեց. «Հայ դատ, կամ այլ կերպ ասած պահանջատիրություն, որը մեր ազգային գաղափարախոսության հիմնական կատեգորիաներից մեկն է: ... Այս զգացմունքները ինձ շատ մոտ են, ես ինքս արևմտահայ եմ ... բայց զգացմունքը՝ զգացմունք, պետական մտածողությունը՝ պետական մտածողություն» [1, էջ 78]: Այսինքն պատգամավորների մի մասը, որը համախմբված էր Հայոց համազգային շարժման (ՀՀԾ-ի) շուրջ, գտնում է, որ պետության կայացման փուլում անհրաժեշտ է քաղաքական պրագմատիզմ դրսևորել և չափից ավել չտարվել ազգային ռոմանտիզմով, ինչը կարող էր վնասել պետականաշինությանը: Հռչակագիրն ըստ նրանց կարևոր իրավաքաղաքական փաստաթուղթ է՝ հիմնված միջազգային իրավունքի սկզբունքների վրա: Այս ուղղության կողմնակիցները ձգտում էին ընդգծել քաղաքացիական հասարակության կառուցման անհրաժեշտությունը, մարդու իրավունքների անքակտելիությունը և պետության աշխարհիկ բնույթը: Այդ հռետորաբանությունը ներառում էր այն բոլոր ազատական գաղափարները, որ կային ՀՀԾ առաջին ծրագրում՝ խոսքի, մամուլի, խղճի ազատություն, բազմակարծություն, սեփականության ձևերի բազմազանություն, ազատ ձեռներեցության առկայություն: Բայց ՀՀԾ ծրագրում առկա էր նաև հայոց լեզվի դիրքի բարձրացման, 1915 թ. հայերի ցեղասպանության փաստի ճանաչման պահանջները, քրիստոնեական հավատին վերաբերվող հարցերը: Հռչակագրի քննարկումների ընթացքում բարձրացվեցին դարձյալ ծրագրում առկա 1921թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրի Հայաստանին վերաբերող կետերը, և Կովկասյան բյուրոյի նույն թվականի հուլիսի 5-ի որոշումը անօրինական ճանաչելու խնդիրները [18]:

Ազգայնական մոտեցման մեջ գերակշռում էին պատմական հիշողության, պահանջատիրության արժեքները, որոնք դիտվում էին որպես ազգային ինքնության կարևորագույն մաս: Պետք է ասել, որ ազգայնական գաղափարները հայ հասարակությունում պահպանվել էին խորհրդային իշխանության տարիներին: Ինչպես ճիշտ նկատել է Ռ. Սյունին՝ «1960-ական թվականներին քաղաքական փոփոխությունների, սոցիալական գործընթացների և ինտելեկտուալ զարգացումների անկայուն խառնուրդը հանգեցրեց մի երևույթի, որը Խորհրդային Միությունում չէր նկատվել քառորդ դար՝ այլախոհ ազգայնականությունը: Չուլունը խթանելու փոխարեն խորհրդային զարգացումը հանգեցրեց էր ազգերի կոն-

սոլիդացման: Ռուսիֆիկացման փոխարեն ավելի մեծ գիտակցում կար ազգային մշակույթների նկատմամբ և նվիրվածություն ազգային լեզուներին: Ազգայնականության դաժան և անխափան ճնշման փոխարեն հետսոսիալիզմի ժամանակաշրջանում ոչ միայն զիջումներ էին արվում ազգայնականությանը, այլև հանախ նուրբ խրախուսում այն» [8, էջ 185]: Դրա ապացույցն էին 1960-ականների կեսերի դեպքերը և Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրի բացումը: Այնպես որ հայերի ազգային ինքնությունը դրսևորված ձևեր էր գտնում հենց որ դրա համար քիչ թե շատ բարենպաստ պայմաններ էին ստեղծվում: 1980-ականների կեսին հայ ազգայնականությունը սկսեղ դրսևորվել հայ մամուլում, օգտվելով Մ. Գորբաչովի հռչակած Հրապարակայնության քաղաքականությունից: 1988 թ.-ց հետո, Ղարաբաղյան շարժման արդյունքում նախկին ազգայնական այլախոհներին միացավ նաև ՀՀԾ ազգայնական թևի և հայկական ավանդական կուսակցությունների ներկայացուցիչները³, ինչպես նաև ազգային պահպանողականները, որոնց ազդեցությունը այս փուլում դեռ շատ թույլ էր: Ազգայնական ուժերի համար հռչակագիրը նախևառաջ ազգային կամքի մանիֆեստ էր, որը պետք է ներառեր Հայոց ցեղասպանության ճանաչման, պատմական արդարության վերականգնման պահանջը և Արցախի հարցը՝ որպես Հայ դատի անբաժանելի մաս: Այս ուղղությունը նաև ձգտում էր ներառել Հայ առաքելական եկեղեցու պատմական դերի, ազգային-մշակութային ժառանգության, ինչպես նաև ողջ հայության միավորման գաղափարի արժևորման դրույթները:

Հռչակագրի մշակման փուլում ազատական և ազգայնական գաղափարախոսությունների յուրահատուկ սիմբիոզը բացատրվում էր նրանով, որ դեռևս կար երկուսի համար ընդհանուր թշնամի հանդիսացող խորհրդային համակարգը: Երկուսի մոտ էլ կար խորհրդային իշխանությունների՝ որպես ռեպրեսիվ, ապազգային և հակաժողովրդավարական համակարգի ընկալում: Ազգայնականները կենտրոնացած էին ռուսացման, ազգային մշակույթի և ինքնության ճնշումների, իսկ լիբերալները՝ ազատությունների, մարդու իրավունքների և շուկայական տնտեսության ճնշման խնդիրների շուրջ: Եթե ազգայնական գաղափարախոսության կրողները ազգային պետության հետ էին կապում ազգային արժեհամակարգի վերականգնումը, ապա լիբերալները ազգային պետության ստեղծումը համարվում էր ժողովրդավարացման անհրաժեշտ հիմք: Երկու գաղափարախոսությունների խոսնակները իրենց ներկայացնում էին որպես

³ Կուսակցությունների մասին օրենքը դեռ չէր ընդունվել, հետևապես այդ կուսակցությունները ֆորմալ առումով դեռ չկային, թեպետ արդեն գործում էին:

ազգի/ հայ ժողովուրդի/հայ հասարակության կամքի արտահայտող: Ազգայնականությունը խոսում էր արտաքին ուժի կողմից ճնշված ազգի անունից, իսկ լիբերալիզմը՝ քաղաքական և քաղաքացիական իրավունքներից զրկված հասարակության անունից: ՀՀԾ-ի առաջնորդները հանդես գալով լիբերալ արժեքային համակարգի պաշտպանությամբ՝ մարդու իրավունքների, շուկայական տնտեսության և զարգացման եվրոպական ուղու, միաժամանակ հենվում էին և վերականգնում ազգային խորհրդանիշները:

Այս փուլում ազգայնականությունը ընկալվում էր պետության կայացմանը նպաստող գաղափարախոսություն, պատահական չէ, որ ազատական գաղափարախոսության առաջնորդները հաճախ Ղարաբաղյան շարժումը անվանում էին ազգային-ազատագրական: Ազգայնականությունը կարծես համերաշխության աղյուսի և ազգային ինքնության ամրապնդման, պետականաշինության գործում կարևոր մոբիլիզացիոն դեր էր խաղում: «Աշխույժ և խիզախ ազգայնականությունը» առաջին անգամ չէ, որ հանդես էր գալիս նաև որպես մոդեռնացնող գործոն [8, էջ 180], քանի որ նախատեսվում էր ապահովել սոցիալական, տնտեսական և մշակութային առաջընթաց:

2. ՀԽՍՀ Գերագույն խորհրդում Հռչակագրի քննարկման ընթացքում կիրառվող հռետորաբանությունը

Գաղափարախոսությունների ուսումնասիրության տեսանկյունից հետաքրքիր է Հռչակագրի քննարկման ընթացքում կիրառվող հռետորաբանության վերլուծությունը: Քննարկման հռետորաբանությունը ցույց է տալիս, որ փաստաթուղթը մշակվում էր ընդգծված էթնոցենտրիկ մոտեցմամբ՝ ազատության, անկախության, արժանապատիվ կյանքի, ավելի արդար հասարակության հույսերը, որոնք հնչում էին քննարկման ընթացքում, մեկնաբանվում էին ազգայնական հասկացություններով: Հայերի համար ազգայնականությունը, ի տարբերություն շատ ազգերի, հին ավանդույթներ ունեւր, և ըստ Բ. Անդերսոնի՝ «անհրաժեշտաբար և բնականաբար կառուցված էր» շատ ավելի հին էթնիկ համայնքի հիմքի վրա [11, էջ 19]: Այն պահպանվել էր ազգային հիշողության մեջ և այժմ ազգային գաղափարախոսությունը դրսևորվելու հնարավորություն էր ստացել:

Գրեթե բոլոր պատգամավորներն իրենց ելույթներում արտահայտում էին հավատարմությունը ազգային արժեհամակարգին, շատերի մոտ համոզմունք կար, որ Հայաստանի քաղաքացիները ինքնադրևորման հնարավորություն կարող են ստանալ միայն ազգային միջավայրում, «գլոբալ ազատությունն ու խաղաղությունը կարող է լինել ազգի ազատագրման և կայունության դեպքում» և միայն սեփական անկախ

պետության պայմաններում: Այսպիսի հռետորաբանությունը հատուկ է «դասական ազգայնականությանը» [15, էջ 342]: Անկախության հետ էին կապվում «հայ ժողովրդի նվիրական ցանկություններն ու կենսական շահերը, ազատ սարելու, ստեղծագործելու, սեփական ճակատագիրը տնօրինելու բնական իրավունքները» [2, էջ 17]: Ելույթներում հաճախ էին անդրադառնում ազգային ինքնությանը, ընդգծում հայ էթնոսի առանձնահատկությունները, ընդգծում բազմադարյա հարուստ մշակույթը, հայրենասիրությունը, արտաքին վտանգներին դիմակայելու համար համախմբումը:

Քննարկման ընթացքում ազատական գաղափարների շուրջ՝ ժողովրդավարության, քաղաքացիական ազատությունների, իրավական պետության, տնտեսական բազմակացութան, կար կոնսենսուս, որը որևէ կերպ չէր քննարկվում: Ամենահաճախ հնչեցվող գաղափարներն էին «բոլոր քաղաքացիների, քաղաքական կուսակցությունների և կրոնական կազմակերպությունների իրավահավասարությունը» [2, էջ 51], «բազմակուսակցություն, կուսակցությունների իրավահավասարություն, օրենսդիր, գործադիր ու դատական մարմինների գործունեության տարանջատում, հայազգի քաղաքացիների համար ՀՀ քաղաքացիություն [2, էջ 54], շուկայական հարաբերություններ, սեփականության ձևերի հավասարություն [2, էջ 100] և այլն:

Սակայն հաճախ նույնիսկ լիբերալ պահանջները հնչեցվում էին ազգայնական երանգավորմամբ, օրինակ՝ «...հանրապետությունում դեմոկրատական, իրավական հասարակարգ հաստատելու նպատակով սպառնալով է բազմակուսակցականությունը, կուսակցությունների իրավահավասարությունը, ա.թ. նաև սփյուռքի քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների», և հետո գրել «խոսքի, մամուլի, խղճի ազատություն և այլն» [2, էջ 100]:

Կարևորագույն հարցերը, ոոնց շուրջը քննարկում էր ծավալվում էին տևյալներն էին.

1. Գետության անվանումը՝

- Անվանել պետությունը Հայկական հանրապետություն, որը հղում է տալիս հայ էթնոսին
- Արևելյան Հայաստանի հանրապետություն: Հղում է պահանջատիրությանը, որ «հետագայում քաղաքական իրավունք ունենանք մեր կորցրած հողերի նկատմամբ», «գիտակցելով, որ Արևելյան Հայաստան հասկացողությունը աշխարհագրական և քաղաքական իմաստով ավելի լայն է և իր մեջ ընդգրկում է նաև այժմյան Խորհրդային Հայաստանը, Ղարախ մարզը, Սուրմալուն, Արդահանի գավառը, Նախիջևանը և որոշ տարածություններ, որոնք այժմ գտնվում են հարևան հանրապետությունում» [2, էջեր 9-10]: Կար նաև կարծիք, որ պետք չի անվանել Արևելյան Հայաստան, քանի որ «դա կնեղացնի մեր հետագա

գործունեության շրջանակները» [4, էջ 90]: Երբեմն հնչեցվում էր «Միացյալ Հայաստանի» գաղափարը:

- Անվանել պետությունը Հայաստանի Հանրապետություն, բայց այնպայման տեքստի մեջ գրել, որ ՀՀ և ԼՂ-ն հանդես կգան միասին որպես մեկ պետություն:

Փաստորեն ելույթներում հիմնավորվում էր պատմական տարածքների հանդեպ հավակնությունների իրավաչափությունը՝ ընդգծելով պատմական շարունակականության գաղափարը, Հայաստանի անկախությունը դիտարկվում էր որպես միջանկյալ փուլ՝ համազգային միավորման ճանապարհին: Այս շրջանակում կիրառվում էր նաև ռոմանտիկ-պատմական հռետորաբանությունը, որը հանգուցվում է «Մեծ Հայք»-ի վերակերտման իդեալով: Ելույթներում շեշտադրվում էր պատմական հողերի նկատմամբ «քաղաքական իրավունքի» գաղափարը:

2. Անկախություն թե սուվերենություն՝ նորացվող միության կազմում

Պատգամավորների հիմնական մասը անկախության հռչակման կողմնակիցներ էր, թեպետ կային տարբերություններ ժամկետների և անկախության ուղիների միջև՝ հայտարարել անմիջապես, հայտարարել, որ սկսվում է անկախացման գործընթաց, հայտարարել մտադրությունը և անկախանալ հարմար պահի: Քիչ էին, բայց կային նաև ելույթներ, որոնք մատնանշելով անկախության տնտեսական հիմքերի բացակայությունը, ավերիչ երկրաշարժի հետևանքները, հարևան միութենական հանրապետությունից ավելի քան 300 հազ. փախստականների առկայությունը, հարցականի տակ էին դնում ինքնուրույն գործելու հնարավորությունը [2, էջ 64]: Որոշ կոմունիստ պատգամավորներ, հենվելով սոցիալ-տնտեսական ռացիոնալության վրա, թվերով ներկայացնելով Հայաստան ներմուծվող առաջին անհրաժեշտության ապրանքները և տնտեսական կապերը խորհրդային այլ հանրապետությունների հետ, հիմնավորում էին անկախության անհնարությունը և հանդես գալիս սուվերենության օգտին՝ նորացված Միության կազմում [4, էջ 102]: Սուվերենության կողմնակից էին նաև այն պատգամավորները, որոնք վախենում էին, որ անկախության գնալով կկորցնենք Արցախը: Այսինքն՝ սուվերենության գաղափարը ներկայացվում էր որպես կայունացման ռեսուրս, իսկ անկախությունը՝ ռիսկի աղբյուր:

3. Պետականության հռչակման ձևը

Քննարկման ընթացքում կարևորվում էր արդյոք Հայաստանը հայտարարում է նոր պետականության հռչակում, թե՛ վերականգնում: Այս տարբերակումը ոչ միայն խորհրդանշական նշանակություն ուներ, այլ կարծիք կար, որ կարող է կոնկրետ հետևանքներ ունենալ, մաս-

նավորապես՝ Լեռնային Ղարաբաղի (ԼՂ) հարցում [2, էջ 71]: Մատնանշվում էր, որ վերջինս Առաջին հանրապետության կազմում փաստացի չի եղել, ուստի ԼՂ-ի համար «վերականգնում» ձևակերպումը կարող էր իրավաբաղադրական խնդիր հարուցել: Այս տեսանկյունից ԼՂ-ի միացման տեսանկյունից առավել ընդունելի էր համարվում «հաստատում» կամ «նոր հռչակում» ձևակերպումը: Միևնույն ժամանակ, ներքին քննարկումների շրջանակում վեճի առարկա էր, թե արդյոք Հայաստանի ԽՍՀ-ն կարելի է բնութագրել որպես «բռնազավթված» և «բռնակցված» երկիր [2, էջ 51], քանի որ այդպիսի նախադեպեր կային արդեն այլ հանրապետությունների հռչակագրերում: Այս ձևակերպումները կարող էին արդարացնել անկախության իրավունքը, սակայն ուժեղացնում էին լարվածությունը խորհրդային իշխանությունների հետ:

4. Հայկական հարց, Ցեղասպանության ճանաչում, Հայ դատ, Հայ պահանջատիրություն, Արևմտյան Հայաստան

Քննարկումների ընթացքում Հայ դատի թեման ներկայացվում էր որպես պատմական և քաղաքական պատասխանատվության անբաժան մաս (իրավունքը չունենք «տեր չկանգնելու մեր ժողովրդի տարագիր զանգվածներին», «այսօր պետք է անվերապահորեն, առանց որևէ մեղմացուցիչ ձևակերպումների հռչակի, որ ինքը պետականորեն տեր է կանգնում հայ դատին» [2, էջ 34], «...ինչքան էլ մենք խուսափենք, մենք իրավունք չունենք վերականգնող, վերաստեղծվող հայոց սուվերեն պետականության առաջին փաստաթուղթը ընդունել առանց հայկական հարցի առկայության», անհասկանալի կլինեք ցեղասպանությանը չանդրադառնալը) [3, էջ 9], Հայկական հարցը պարտադիր պետք է ներառվի [2, էջ 100]: Հայ դատը դիտարկվում է որպես անկախացող պետության գաղափարական առանցք: Դրա հետ մեկտեղ պատգամավորների ելույթներում պատահում էին պահանջատիրության չափաբաժան, իրատեսականության և ռազմավարական մտածողության շեշտադրումներ: Այս հռետորաբանությունը տեղադրում էր խնդիրը ոչ թե միայն ցանկության, այլ նաև հնարավորության տիրույթում՝ «Ուզել ամեն ինչ կարելի է, բայց երբ ուզել, ինչպես ուզել, ինչո՞ւ ուզել, պետք է, խորհել, պետք է կշռադատված լինի» [2, էջ 62], «պետք է խոսել այն մասին, ոչ թե ինչ ենք ուզում, այլ ինչ է հնարավոր» [2, էջ 64]: Ի վերջո հռչակագրում ամրագրվեց, որ «Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին»:

5. Արցախի հարցը

Քննարկվում էր փաստաթղթում անվանել Արցախ, կապելով պատմական անցյալի հետ, թե

Լեռնային Ղարաբաղ, որը միջազգայնորեն ճանաչված տերմին էր [2, էջ 8]: Արցախը՝ որպես պատմական անվանում, հանդիսանում էր պատմական հիշողության, ինքնության և պատմական իրավունքի հենակետ: Ի հակադրություն՝ «Լեռնային Ղարաբաղ» տերմինը քաղաքական-իրավական համատեքստ ուներ: Այս տերմինի կիրառումն ուներ գործնական նպատակահարմարություն, որն ուղղված էր միջազգային լսարանների հետ հաղորդակցման արդյունավետությանը:

6. Հայոց լեզվի առանձնահատուկ պետական դերի ընդգծում

Հայոց լեզվի՝ որպես պետական լեզվի ամրագրումը [2, էջ 53] խորհրդանշականից վեր՝ էքզիստենցիալ նշանակություն ունեցող քայլ էր դիտարկվում հայաստանյան պետականության նոր շրջափուլի մեկնարկին: Ելույթներում հղում կար ոչ միայն ներկա օրակարգին, այլ՝ դարերի ընթացքով կոփված լեզվամշակութային պայքարին: Լեզուն ներկայացվում էր որպես գոյության համար անբաժանելի պայման, ազգի հավաքական հիշողության պահոց և ազգային ինքնիշխանության խորհրդանիշ: Հայաստանում 100 հազար հայ ընտանիքներում հայոց լեզուն խոսակցական չլինելը դիտվում էր որպես «երկրաշարժ մեր հոգևոր աշխարհում» [2, էջ 59]: Ընդ որում այդ հարցը բարձրացնողները հիմնականում ազգային-մշակութային հեղինակություններ էին՝ հայտնի գրողներ, գիտնականներ, մշակութային գործիչներ: Լեզվի՝ որպես պետականության սյուններից մեկի, շեշտադրումը նաև հակադրվում էր խորհրդային անցյալում գործող բազմալեզու կամ ռուսալեզու վարչականության ավանդույթին: Այստեղ հռետորաբանությունը հստակորեն ներգրավված էր ազգ-պետություն ձևավորման խոսույթում:

7. Վերաբերմունքը Սփյուռքի նկատմամբ

Այս խնդրի շուրջ խոսելիս հռետորները օգտագործում էին «ամբողջական հայություն», «համայն հայություն» հասկացությունները, զգացողություն ստեղծելով, որ Սփյուռքը, որպես մի ամբողջություն, կարևոր ու անբաժանելի է Հայաստանից: Հռետորները հանդես էին գալիս կոնկրետ առաջարկներով, թե հոշակագրի որ մասերում կարելի է ընդգծել Սփյուռքի կարևորությունը: Օրինակ, հիմնավորելով, որ «առանց սփյուռքի չկա ամբողջական հայություն, իսկ սփյուռքը դա կուսակցություններն են», առաջարկում էին բազմակուսակցականության մասում, որտեղ խոսվում էր, որ բոլոր կուսակցությունները հավասար են, ավելացնել՝ ա.թ. սփյուռքի քաղաքական կուսակցությունները⁴ [2,

էջ 100] կամ Սփյուռքում գործող կուսակցությունները պետք է կենտրոնանան ունենան Հայաստանում [2, էջ 53]: Հոշակագրում ներառվեց հետևյալ ձևակերպումը՝ «Արտերկրի հայությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունք ունի»:

Այսպիսով, Գերագույն խորհրդում Անկախության հոշակագրի քննարկումների խոսույթի վերլուծությունը բացահայտում է ազգայնական հռետորաբանության գերակշռող ներկայությունը, ինչը մի կողմից արձանագրում է պատմական պայմանները, իսկ մյուս կողմից՝ ընդգծում ազգային ինքնության վերականգնման ու իրացման կարևորությունը: Այդ շրջանում ազգայնականությունը որպես այդպիսին դատապարտված էր հաղթանակի [17, էջ 110]: Չմոռանանաք, որ փաստաթուղթը քննարկվում էր այն ժամանակ, երբ Հայաստանը դեռ ԽՍՀՄ կազմում էր և որևէ մեկը չէր կարող պատկերացնել, որ այն կգոյատևի ընամենը մեկ տարի: Անկախությունից երկար ժամանակ զրկված ժողովրդի համար Անկախության հոշակագիրը մեկնաբանվում էր որպես եզակի պատմական հնարավորություն՝ ընդգծելու ազգային ինքնությունը, վերականգնելու կորցրած իրավունքներն ու կենտրոնացնելու կոլեկտիվ իղձերն ու սպասումները՝ պատմական արդարության վերականգնման և ապագայի ինքնիշխանության հասնելու ուղիներում:

3. Խորհրդային միութենական հանրապետությունների անկախության հոշակագրերում ազգայնական և լիբերալ խոսույթների վերլուծություն

Վերակառուցման տարիներին կենտրոնացված իշխանության թուլացումը, Կոմունիստական կուսակցության մենատիրության օրինականության կասկածի տակ առնելը, լիբերալ դեմոկրատական միտումներ էր առաջացրել նաև այլ միութենական հանրապետություններում: Մինչ այդ ԽՍՀՄ-ը պահպանվում էր կոշտ հրահանգչական և ռեպրեսիվ մեթոդներով: Դրանց կորուստի պայմաններում 1989-1991 թթ. սկսվեց մի գործընթաց, որը ստացավ «սուվերենությունների շքերթ» անվանումը, երբ մեկը մյուսի ետևից միութենական հանրապետությունները սկսեցին հոշակագրեր ընդունել: Մեծապես այդ ամենին նպաստեց նաև 1980-ականների սկզբներից ավելի ցայտուն արտահայտված տնտեսական ճգնաժամը, որը բերեց պարենային ապրանքների դեֆիցիտի, արտադրողականության անկման: Հանրապետությունները սկսեցին դիտարկել Կենտրոնը որպես զարգացման խոչընդոտ, որը թալանում էր ազգային ռեսուրսները և չէր կարողանում տնտե-

⁴ Այնպես չէ, որ այդ բոլոր առաջարկները միաձայն ընդունվում էին, օրինակ, Ի.Մուրադյանի կողմից հնչեցված այդ

առաջարկի կողմ էր քվեարկել ընդամենը 78 պատգամավոր, դեմ՝ 38, ձեռնպահ՝ 32 և առաջարկը չանցավ [5, էջ 84]:

սական աճ ապահովել: Առավել ակտիվ էին այդ առումով մերձբալթիկական հանրապետությունները՝ Լիտվան, Լատվիան, Էստոնիան: Ազգայնական միտումները բացի Հայաստանից ուժեղ էին արտահայտված նաև Վրաստանում և Մոլդովայում: Այդ շրջանում անկախություն և սուվերենություն բառերը կիրառվում էին տարբեր իմաստներով՝ սուվերենությունը ընկալվում էր որպես անկախություն հանրապետությունների նորացվող ֆեդերացիայի կամ կոնֆեդերացիայի կազմում, իսկ անկախությունը՝ Միությունից

դուրս: Այդ պատճառով հռչակագրերը մշակելիս խորհրդային հանրապետությունների համար կարևոր խնդիր էր դրանում «նորացվող միության» նկատմամբ վերաբերմունքի արտահայտությունը: Որոշ հանրապետություններում անկախացման փաստաթղթերը փուլերով հաստատվեցին, որոշներում՝ անկախությունը հռչակվեց միանգամից: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են սուվերենության/անկախության հռչակագրերի ընդունման ժամկետները տարբեր հանրապետություններում՝

1.	Միութենական հանրապետություն	Սուվերենության կամ անկախության փաստաթղթի ընդունման ժամկետը
2.	Էստոնիա	16.11.1988՝ Էստոնական ԽՍՀ սուվերենության հռչակագիր [20], 08.05.1990՝ Օրենք «1938 թվականի անկախ Էստոնիայի Հանրապետության Սահմանադրության վերականգնման մասին»
3.	Լիտվա	18.05.1989՝ Լիտվայի պետական սուվերենության հռչակագիր [21] 11.05.1990՝ Լիտվայի պետության անկախության վերականգնման մասին ակտ
4.	Լատվիա	04.05.1990՝ Լատվիայի Հանրապետության անկախության վերականգնման հռչակագիր [22] 21.08.1991՝ «Լատվիայի Հանրապետության պետականության մասին» սահմանադրական օրենք
5.	Ռուսաստան	12.06.1990՝ ՌՄՖՍՀ պետական սուվերենության հռչակագիր [23]
6.	Ուզբեկիստան	20.06.1990՝ Սուվերենության հռչակագիր [24] 31.08.1991՝ ԳԽ որոշում «Ուզբեկստանի Հանրապետության պետական անկախության հռչակման մասին»
7.	Մոլդովա	23.06.1990՝ Մոլդովայի հանրապետության սուվերենության հռչակագիր [25] 27.08.1991՝ Մոլդովայի հանրապետության անկախության հռչակագիր
8.	Ուկրաինա	16.07.1990՝ Ուկրաինայի պետական սուվերենության հռչակագիր [26] 24.08.1991՝ Ուկրաինայի անկախության հռչակման ակտ
9.	Բելորուս	27.07.1990՝ Բելառուսի ԽՍՀ պետական սուվերենության հռչակագիր [27]
10.	Թուրքմենիստան	22.08.1990՝ Թուրքմենական ԽՍՀ պետական սուվերենության հռչակագիր [28]
11.	Հայաստան	23.08.1990՝ Հռչակագիր Հայստանի անկախության մասին [29]
12.	Տաջիկստան	24.08.1990՝ Տաջիկական ԽՍՀ պետական սուվերենության հռչակագիր [30]
13.	Ղազախստան	25.10.1990՝ Ղազախստանի ԽՍՀ պետական սուվերենության հռչակագիր [31]
14.	Վրաստան	14.11.1990՝ Օրենք «Վրաստանի Հանրապետությունում անցումային շրջանի հայտարարման մասին» 09.04.1991՝ Վրաստանի պետական անկախության վերականգնման մասին օրենք [32]
15.	Ղրղզստան	15.12.1990՝ Ղրղզստանի Հանրապետության պետական [33] սուվերենության հռչակագիր 31.08.1991՝ Ղրղզստանի Հանրապետության պետական անկախության հռչակագիր
16.	Ադրբեջան	30.08.1991՝ Ադրբեջանի Հանրապետության պետական անկախության վերականգնման հռչակագիր [34] 18.10.1991 Սահմանադրական ակտ «Ադրբեջանական հանրապետության պետական անկախության վերականգնման մասին»

Դժվար չէ նկատել, որ ԽՍՀՄ թուլացման հետ մեկտեղ շատ հանրապետություններում սուվերենության հռչակագրերից անցում էր կատարվում անկախության հռչակման: Հռչակագրերի բովանդակությունը կախված էր ազգային ինքնագիտակցության անի աստիճանից: Հրապարակայնության քաղաքականությունը հնարա-

վորություն էր ստեղծել քննարկել մինչ այդ տարուացված շատ թեմաներ՝ բռնաճնշումներ, ժողովուրդների բռնի տեղահանում, կենտրոնի «գաղութային» քաղաքականություն և այլն: Շատ հանրապետությունում ազատության սահմանները զժվում էին ազգային էլիտաների կողմից: Որոշ հանրապետություններում սուվերենություն հռչա-

կելու ցանկությունն առաջացավ Ռուսաստանի Դաշնության սուվերենության հռչակումից հետո, ինչը ԽՍՀՄ-ի գոյության համար էական սպառնալիք դարձավ [9, էջ 144]: Դա կարծես լեգիտիմացրեց գործընթացը մյուս հանրապետություններում:

Բացի վերը նշված պատճառներից, Մոսկվայի ազդեցության թուլացման պայմաններում որոշ հանրապետություններում կար նաև պետական և կուսակցական էլիտաների ազդեցության և ռեսուրսների համար սուվերային պայքար և դրանք սուվերենության կարգախոսները օգտագործում էին որպես գործիքներ: Կախված այս կամ այն հանրապետության զարգացման մակարդակից, սոցիալ-տնտեսական պարամետրերից հռչակագրերում արտացոլում էին քաղաքական էլիտաների ձգտումները՝ հիմնավորելու ինքնիշխանությունը ինչպես Էթնոազգային, այնպես էլ լիբերալ արժեքների միջոցով: Գրեթե բոլոր հռչակագրերը լայնորեն կապում էին ինքնիշխանությունը ժողովրդավարության հետ, թեև լիբերալ արժեքների ընդգրկման խորությունը դրանցում տարբեր էր: Ավելին, տարբեր հանրապետությունների լիբերալ արժեքների հետևորդները Կենտրոնի դեմ ավելի արդյունավետ պայքարելու համար մեծացնում էին շփումը միմյանց հետ: Ինչպես նշում է հետազոտողներից մեկը՝ «1988 թ. հունիսին ուկրաինական, հայկական, վրացական, ռատվիական, լիտվական և էստոնական այրախոս ազգայնական շարժումների ներկայացուցիչները շփումներ էին սկսել միմյանց հետ և ստեղծել համակարգող հանձնաժողով» [7, էջ 340]: Այդ համակարգումը գրականության մեջ ստացավ «ազգայնականության Ինտերնացիոնալ» անվանումը [16, էջ 315]:

Հանրապետությունների հռչակագրերում ազատական խոսույթները գրեթե չէին տարբերվում: Շեշտվում էին հետևյալ արժեքները՝ ժողովրդավարություն և օրենքի գերակայություն (իրավական պետություն, դատական համակարգի անկախություն), մարդու իրավունքների ապահովում, անկախ ազգային և այլ պատկանելիությունից, իշխանությունների տարանջատում և շուկայական տնտեսություն:

1990 թ. հանրապետությունների մեծ մասում իշխանության էին եկել ազգայնական ուժերը «ինստիտուցիանալեզնելով երկրով մեկ տարածված ազգայնականության ալիքները» [7, էջ 345], սակայն դրանց խոսույթները զանազանվում էին թե բովանդակությամբ, թե անկախության ուղու ընտրման վճռականությամբ: Անկախության ամենավաղ և վճռական պահանջողները մերձբալթիկական հանրապետություններն էին, Վրաստանը, Մոլդովան, Հայաստանը [10, էջ 610]: Այդ հանրապետությունները բարենպաստ պայմաններ ստեղծեցին այն 9 հանրապետությունների համար, որոնք 1991 թ. մարտի 17-ին մասնակցեցին միութենական հանրաքվեին և քվեարկեցին ԽՍՀՄ կազմում մնալու օգտին: Դրանք կենտրոնից մեծ քաղաքական և ֆինանսական ռեսուրսներ ստացան [10, էջ 610]: Դրա ապացույցներից է

տիրահռչակ «Օղակ» օպերացիայի անցկացումը խորհրդային ուժայինների մասնակցությամբ ի օգուտ Ադրբեջանական ԽՍՀ-ի, որը ի տարբերություն Հայաստանի մասնակցել էր համամիութենական հանրաքվեին և քվեարկել Միության կազմում մնալու օգտին:

Խորհրդային միության առավել զարգացած հանրապետություններում ձևավորված «ժողովրդավարական շարժումը» Կենտրոնական Ասիայում և Ղազախստանում գրեթե բացակայում էր՝ սոցիալական լայն հենքի բացակայության պատճառով: Այդ հանրապետություններում, որոնք նախկինում շրջանառում էին խորհրդային հանրապետությունների հետ Միության մեջ «կամավոր միացման» գաղափարը, 1991 թ. փաստաթղթերում արդեն ընդգծվում էր Ռուսաստանի կողմից տարածաշրջանի նվաճման փաստը: Դրանից բխում էր այն, որ ռուսներին և ԽՍՀՄ-ը դիտարկում էին որպես օկուպանտներ, իսկ հանրապետությունների ԽՍՀՄ կազմում լինելը՝ ապօրինի: Միջինասիական հանրապետություններին և Ադրբեջանին ավելի հասուկ էր «բյուրոկրատական ազգայնականությունը», որի դեպքում իշխող կլանները մանիպուլացնում էին ազգային զգացումները, օգտագործելով դրանք իրենց շահերի համար: Մինչդեռ այդ հանրապետություններում կար նաև ընդհատակյա ազգայնականություն, որը հաճախ փոխկապակցված էր այլախոհական շարժման հետ [13, էջ 95]: Բոլոր հանրապետություններից էականորեն տարբերվում էր ռուսական ազգայնականությունը, քանի որ այն ընդգրկում էր միայն քաղաքական էլիտային և չէր ձգտում զանգվածներին ներքաշել անջատողականության մեջ, այն ավելի շատ 2 անձերի՝ Բ. Ելցինի և Ս. Գորբաչովի անձնական մրցակցության արդյունք էր [8, էջ 82]:

Սուվերենության շքերթը ուղեկցվում էր «օրենքների պատերազմով», երբ անկախություն հռչակած հանրապետությունները փորձում էին հաստատել տեղական օրենքների գերակայությունը կենտրոնականի համեմատ [6, էջ 246]:

1991 թ. օգոստոսից հետո սուվերենությունների շքերթը ծավալվում էր ըստ էության արդեն իշխանություն չունեցող միութենական մարմինների վերացման պայմաններում: Այն սուվերենության շքերթներ առաջացրեց նաև Ռուսաստանի Դաշնության ներքում [14, էջ 61]: Անջատողական ձգտումներ առաջացան այլ բազմազգ հանրապետություններում: Միութենական հանրապետությունների սուվերենության հռչակագրերում ձևավորվում էր երկակի մոտեցում: Օրինակ՝ Ուկրաինայի հռչակագրում ասվում էր, որ Ուկրաինայի ՄՍՀ-ն զարգանում է որպես «սուվերեն ազգային պետություն»՝ իրացնելով ուկրաինական ազգի ինքնորոշման իրավունքը: Սակայն զուգահեռ ընդգծվում է, որ երկրի ժողովուրդը կազմված է բոլոր ազգային պատկանելության քաղաքացիներից և հենց այդ բազմազգ ժողովուրդն է իշխանության միակ աղբյուրը: Նման երկակիություն՝ ազգի և ժողովրդի

հասկացությունների միջև, առկա է նաև Բելոռուսի, Ղազախստանի և Տաջիկստանի հոշակագրերում: ՌՍՖՍՌ-ի հոշակագրում կիրառվում է միայն «բազմազգ ժողովուրդ» տերմինը [16, էջ 308]:

Ռուսաստանի կամ ԽՍՀՄ-ի կողմից բռնագավթման խոսույթը առկա է Վրաստանի, Մոլդովայի, մերձբալթյան հանրապետությունների հոշակագրերում:

Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Լիտվայի, Լատվիայի հոշակագրերում հղում կա 1918-1920/21 թթ. ազգային հանրապետությունների առկայությանը և դրանց վերականգնմանը, իսկ Վրաստանի հոշակագրում հիշատակված է նաև «պատմության խորքերից սկզբնավորված պետականությունը»:

Հոշակագրերում կարծես յուրաքանչյուրը արտահայտել է իր «ազգային ցավը»: Այսպես Վրաստանի հոշակագրում բացի պետականության կորստից XIX դարում, հիշատակվում է նաև 1989 թ. ապրիլի 9-ի ողբերգությունը, Էստոնիայի հոշակագրում՝ «խորհրդային տարիներին ազգությանը Էստոնացիների համար ոչ բարենպաստ ժողովրդագրական իրավիճակը», Մոլդովայի հոշակագրում՝ 1775 և 1812 թթ. բաժանումների անօրինականությունը, Մերձդնեստրի շրջանը մոլդով ժողովրդի պատմական և էթնիկ տարածքի անբաժանելի մաս լինելը, Բեսարաբիայի, Հյուսիսային Բուկովինայի և Հերցի շրջանի բնակչության իրավունքների խախտումը և բռնի կերպով 1940 թ. գրավումը:

Հոշակագրերում արտահայտված են նաև ազգային «վախերը»: Այսպես, տարածքային ամբողջատիրության պահպանմանը հղում կա Ուկրաինայի, Վրաստանի, Ադրբեջանի հոշակագրերում: Վերջինիս հոշակագրում հատուկ շեշտված է, որ «Ադրբեջանի ինքնավարությունը տարածվում է ամբողջ տարածքի վրա, ներառյալ Նախիջևանի ԻՍՄՀ և ԼՂԲՄ-ը, որոնք Ադրբեջանի անբաժանելի մասն են»:

Ազգային-մշակութային վերածնունդն է նպատակադրված Ուկրաինայի, Ղազախստանի, Տաջիկստանի հոշակագրերում: Ազգային լեզվի զարգացման խնդիրն է շեշտադրված Լատվիայի, Ուկրաինայի, Բելոռուսի, Ադրբեջանի, Ղազախստանի, Ղրղզստանի հոշակագրերում:

Միջին Ասիայի հանրապետությունների հոշակագրերում ազգայնականությունը շեշտադրված է ազգային մշակույթի, ազգի առջև պատմական պատասխանատվության, ազգային ավանդույթների, սովորույթների պահպանման կարևորությունը:

Այսպիսով, բոլոր հանրապետությունների սուվերենության հոշակագրերը արտահայտում են ինչպես լիբերալ, այնպես էլ ազգայնական խոսույթի տարրեր: Բայց եթե լիբերալ խոսույթը բոլորի մոտ գրեթե նույն է, ապա ազգայնական

մոտեցումները տարբերվում են դիսկուրսիվ շեշտադրումներով, նպաստելով համազգային համախմբմանը և հիմնավորելով սուվերենության կամ անկախության լեգիտիմությանը:

Եզրակացություն

Հետազոտությունը ցույց տվեց, որ Հայաստանի Անկախության հոշակագիրը դարձավ ոչ միայն ազատական ձգտումների, այլև ազգային իղձերի արտահայտման փաստաթուղթ: Այն ձևավորվեց որպես պատմական արձագանք՝ միաժամանակ մարմնավորելով արդիականացման ուղենիշերը և նպաստելով ազգային ինքնության ինստիտուցիոնալացմանը: Եթե լիբերալ խոսույթը շեշտադրում է ժողովրդավարության, բոլոր քաղաքացիների հավասարության, խոսքի, մամուլի, խղճի ազատության, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման, բազմակուսակցության, կուսակցությունների իրավահավասարության, իրավապահ մարմինների և զինված ուժերի ապաքաղաքականացման գաղափարները, ապա ազգայնական խոսույթը՝ հիմնված պատմական արդարության վերականգնման, ինքնորոշման իրավունքի և համազգային համախմբման շուրջ, ավելացրեց հոշակագրին զգայական և համախմբող ուժը: Այդ համադրությամբ հոշակագիրը վերածվեց յուրօրինակ քաղաքական մանիֆեստի, որն արտահայտեց ապագա պետականության նկատմամբ կոլեկտիվ սպասումները: Ազգայնականությունն այս փուլում հանդես էր որպես համախմբող, մոբիլիզացնող և մոդեռնացնող գործոն, որն ուղղված էր անկախ պետության կառուցմանը: Այդպիսով, Հայաստանի Անկախության հոշակագիրը ուղենիշ դարձավ նաև հետագայում Սահմանադրության մշակման համար:

Օգտագործված գրականության ցանկ

Արխիվային փաստաթղթեր՝

1. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆոնդ 207, ցուցակ 62, գործ 52
2. ՀԱԱ, ֆ.207, ց. 62, գ. 54
3. ՀԱԱ, ֆ.207, ց. 62, գ. 55
4. ՀԱԱ, ֆ.207, ց. 62, գ. 56
5. ՀԱԱ, ֆ.207, ց. 62, գ. 63

Օգտագործված գրականություն

8. **Astrid A. Tuminez.** Nationalism, Ethnic Pressures, and the Breakup of the Soviet Union // Journal of Cold War Studies. Vol. 5. No. 4
6. **Lubomyr Hajda.** Ethnic Politics and Ethnic Conflict in the USSR and the Post-Soviet States // Humboldt Journal of Social Relations. 1993. Vol. 19. No. 2.
7. **Mark R. Beissinger,** Nationalism and the Collapse of Soviet Communism // Contemporary European

- History. Cambridge University Press. 2009. Vol. 18, No. 3
8. **Suny, R. Gr.** Looking Toward Ararat. Armenia In Modern History.-Indiana University Press.1993. p.304
 9. **Suny, R. G.** The Revenge of the Past Nationalism, Revolution, and the Collapse of the Soviet Union. 1993. Stanford University Press Stanford, California
 10. **Timothy M. Frye.** Rethinking Nationalism and Sovereignty. // Journal of International Affairs.1992. Vol. 45, No. 2
 11. **Андерсон Б., Бауэр О., Хрох М. и др.** Нации и национализм. – М.: Праксис, 2002. – 416 с.
 12. **Лорд Актон.** Принцип национального самоопределения. // Нации и национализм. – М.: Праксис, 2002. – 416 с.
 13. **Паин Э. А.** Национализм под покровом стабильности: изучение латентных факторов дезинтеграции СССР (уроки брежневской эпохи). // Мир России. 2003. Т. 32. № 1
 14. **Синцов Г., Битюцкий Е.** Роль и последствия «парада суверенитетов» 1990-1991 гг. в становлении и развитии Российской государственности. // Известия высших учебных заведений. Поволжский регион. Общественные науки. 2019. №1.
 15. **Смит Энтони Д.,** Национализм и модернизм, Критический обзор современных теорий наций и национализма. – М.: Праксис, 2004. – 464 с.
 16. **Чешко С. В.** Распад СССР: этнополитический анализ. 2-е изд. – М.: ИЭА РАН, 2000.
 17. **Эрнест Геллнер.** Нации и национализм. – М.: Прогресс, 1991. – 320 с.
- Մամուլ`**
18. «Հայր» թերթ, 1989, նոյեմբեր
 19. «Հայր» թերթ, 1990, մարտ
- Միութենական հանրապետությունների սովերենության կամ անկախության հռչակագրեր`**
20. Декларация Верховного Совета Эстонской Советской Социалистической республики// эл.ресурс – <https://www.gorby.ru/userfiles/estonia.pdf> (Дата обращения: 10.05.2025).
 21. Декларация Верховного Совета Литовской Советской Социалистической Республики. // эл.ресурс – <https://www.gorby.ru/userfiles/litva.pdf> (Дата обращения: 10.05.2025).
 22. Декларация Верховного Совета Латвийской Советской Социалистической Республики о восстановлении независимости Латвийской Республики // эл.ресурс – <https://www.gorby.ru/userfiles/latvia.pdf> (Дата обращения: 10.05.2025).
 23. Декларация о государственном суверенитете Российской Советской Федеративной Социалистической Республики //эл.ресурс – <https://u.to/KhJDlg> (ссылка укорочена. Дата обращения: 13.05.2025).
 24. Декларация о суверенитете // эл.ресурс – <https://lex.uz/docs/185389> (Дата обращения: 10.05.2025).
 25. Декларация о суверенитете Советской Социалистической республики Молдова //эл.ресурс – <https://www.gorby.ru/userfiles/moldova.pdf> (Дата обращения: 10.05.2025).
 26. Декларация о государственном суверенитете Украины // эл.ресурс – https://www.gorby.ru/userfiles/file/deklaraciya_ussr_1990.pdf (Дата обращения: 10.05.2025).
 27. Декларация Верховного Совета Белорусской Советской Социалистической Республики о государственном суверенитете Белорусской Советской Социалистической Республики // эл.ресурс – <https://pravo.by/document/?guid=3871&p0=v09000193> (Дата обращения: 10.05.2025).
 28. Декларация о государственном суверенитете Туркменской Советской Социалистической Республики// эл.ресурс– <https://www.gorby.ru/userfiles/turkmenistan.pdf> (Дата обращения: 10.05.2025).
 29. Հռչակագիր Հայաստանի անկախության մասին //эл.ресурс – <https://u.to/LhNDlg> (հղումը կարճեցված է: Դիտման ամսաթիվը՝ 10.05.2025).
 30. Декларация о государственном суверенитете Таджикской Советской Социалистической Республики // эл.ресурс – <https://www.gorby.ru/userfiles/tadgikistan.pdf> (Дата обращения: 10.05.2025).
 31. Декларация о государственном суверенитете Казахской Советской Социалистической Республики // эл.ресурс – <https://www.gorby.ru/userfiles/kazakhstan.pdf> (Дата обращения: 10.05.2025).
 32. Акт о восстановлении государственной независимости Грузии // эл.ресурс – [https://www.gorby.ru/userfiles/gruzia\(1\).pdf](https://www.gorby.ru/userfiles/gruzia(1).pdf) (Дата обращения: 10.05.2025).
 33. Декларация о государственном суверенитете Республики Кыргызстан // эл.ресурс – <https://www.gorby.ru/userfiles/kirgizia.pdf> (Дата обращения: 10.05.2025).
 34. Декларация Верховного Совета Азербайджанской Республики О восстановлении государственной независимости Азербайджанской Республики // эл.ресурс – <https://www.gorby.ru/userfiles/deklaraciya.pdf> (Дата обращения: 10.05.2025).
- ՏճանաՀանճնվել է՝ 22.05.2025
 Рецензирована/Գրախոսվել է՝ 30.05.2025
 Принята/Ընդունվել է՝ 06.06.2025